ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1960 Общественные науки

40 ՏԱՐԻ

Հայ ժողովուրդը տոնական ցնծության մեջ է: Սովետական Միության ժողովուրդների մեծ ընտանիքում նա այս տարի նշում է Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման 40 տարին: 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի ապստամբ բանվորները ու գյուղացիները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, ռուս մեծ ժողովրդի և Սովետական Ռուսաստանի մյուս ժողովուրդների եղբայրական օգնությամբ տապալեցին մաուզերիստների, խրմբապետների, սպեկուլյանտների վրա հենված և բռնության, կողոպուտի ու կամայականության վրա խարսխված դաշնակցական կառավարությունը, իշխանությունը վերցրին իրենց ձեռքը և ստեղծեցին իրենց անկախ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկան:

Սովետական Հայաստանը Մեծ Հոկտեմբերի ծնունդն է: Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, Կոմունիստական պարտիան, Մեծ Լենինը լուսավորեցին բազմաչարչար հայ ժողովրդի ուղին, փրկեցին նրան ֆիզիկական բնաջնջման վտանգից ու ազգային աղետից: Հոկտեմբերյան ռևոլյուցիան սկիզբ դրեց մեր երկրի բոլոր ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի իսկական պատմության, նրա ազգային վերածնունդի:

Մանր փոքրությունների ու դաժան պայքարի միջոցով են Հայաստանի բանվորները ու գյուղացիները ձեռք բերել իրենց սոցիալական ազատագրությունն ու ազգային անկախությունը: Ցարական բռնակալության, բուրժուանացիոնալիստական Դաշնակցություն պարտիայի և հակառևոլյուցիոն մյուս պարտիաների ու հոսանքների, գերմանա-բուրական, անգլո-ամերիկյան և օտարերկրյա մյուս գաղութարարների դեմ Հայաստանի աշխատավորության պայքարը ղեկավարել են բոլշևիկյան կազմակերպությունները:

Հայաստանի Կոմունիստական պարտիան ՍՄԿՊ մարտական ջոկատներից մեկն է: Նրա պատմությունը անխզելիորեն կապված է ՍՄԿՊ պայքարի ու հաղթանակների պատմության հետ: 20-րդ դարի սկզբին ռուսական ռևոլյուցիոն բանվորական շարժման անմիջական ազդեցության տակ Անդրկովկասում, և այդ թվում Հայաստանում, հանդես եկան պրոլետարական առաջին կազմակերպությունները, որոնք Անդրկովկասի ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատներ Ի. Ստալինի, Ստ. Շահումյանի, Վ. Կեցխովելու, Բ. Կնունյանցի, Մ. Ցխակայայի, Ա. Մուլուկիձեի և ուրիշների գլխավորությամբ, ամսորում գտնվող ռուս ռևոլյուցիոներներ Մ. Կալինինի, Վ. Կուրնատովսկու և մյուսների օգնությամբ լայն պայքար են ծավալում բուրժուական և բուրժուա-նացիոնալիստական պարտիաների ու հոսանքների դեմ՝ Անդրկովկասում լենինյան-իսկրայական տիպի սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ ստեղծելու համար:

Հայաստանում մարքսիստական առաջին խմբակի ստեղծման և սոցիալ-դեմոկրատական շարժման ձևավորման պատմությունը կապված է մեծ լենինյան Ստեփան Շահումյանի անվան հետ: 1899 թ. գալով Ջալալ-օղլի, Ստ.

Շահումյանը հիմնադրում է մարքսիստական խմբակ, որի անդամները ոչ միայն ուսումնասիրում էին մարքսիզմը, այլև հետազայում՝ 1901 թ. ձեռք բերելով հեկտոգրաֆ, բազմացնում և տարածում էին սոցիալ-դեմոկրատական թռուցիկներ:

900-ական թվականների սկզբներին լենինյան «Իսկրայի» գաղափարական ազդեցության տակ Անդրկովկասում ձևավորվում են սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ: 1902 թ. ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեին կից, Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի և Արշ. Զորարյանի նախաձեռնությամբ, ստեղծվում է «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը», որը հրատարակում է լենինյան-իսկրայական ուղղության առաջին հայերեն անլեզալ «Պրոլետարիատ» թերթը: «Պրոլետարիատ»-ի № 1-ում հրատարակված էր «Հայ սոցիալ-դեմոկրատների միություն» Մանիֆեստը, որտեղ մասնավորապես ընդգծվում էր, որ միությունը իրեն համարում է ՌՍԴԲՊ-ի անբաժանելի մասը:

Վ. Ի. Լենինը «Իսկրա»-ի № 33-ում տպագրած հատուկ հոդվածում ի սրտե ողջունում է Միության և նրա Մանիֆեստի հանդես գալը: Վ. Ի. Լենինը բարձր գնահատական է տալիս ազգային հարցին ճիշտ դրվածք տալու «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» ուշագրավ փորձին և ցանկանում է, որ այդ փորձը հասցվի մինչև վերջ:

ՌՍԴԲՊ-ի գաղափարական ղեկավարությամբ 1903—1905 թթ. կազմակերպորեն ձևավորվում և ամրապնդվում են բոլշևիկյան խմբերն ու կազմակերպությունները Երևանում, Ալեքսանդրապոլում, Լոռում, Կարսում, Ալավերդում, Հաղպատում, Դափանում, Գորիսում, Սարիղամիշում և այլ վայրերում: Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները անում և ամրապնդվում են դաշնակների, կովկասյան բունդիզմը սնելու համար հորինված «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության» («սպեցիֆիկների»), հնչակյանների և բանվոր դասակարգի շարքերին խորթ այլ կազմակերպությունների ու հոսանքների դեմ մղված պայքարում:

Ինչպես ռուսական առաջին ռևոլյուցիայի, այնպես էլ ստոլիպինյան ռեակցիայի, բանվորական շարժման վերելքի ու համաշխարհային պատերազմի տարիներին Հայաստանի բոլշևիկները ու բոլշևիկյան կազմակերպությունները միշտ էլ հավատարիմ են եղել մարքսիզմ-լենինիզմի գաղափարներին, բարձր են պահել պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն շարժմանը նոր թափ հաղորդեց: Բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ Հայաստանի աշխատավորների մղած պայքարը Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաների հակառևոլյուցիոն կոալիցիայի, ինչպես նաև դաշնակցական կառավարության և օտարերկրյա իմպերիալիզմի դեմ ավելի վճռական բնույթ ստացավ: Ռևոլյուցիոն շարժման թափը նկատելիորեն աշխուժացրեց բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը:

Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները 1919 թ. ամռանը կազմակերպորեն ամրապնդվեցին: Այդ կազմակերպությունների ղեկավար կորիզը համալրվեց ՌԿ(բ)Պ Կենտկոմի և Կովկասյան Երկրային Կոմիտեի կողմից գործուղված փորձված կադրերով: Որակական փոփոխություն տեղի ունեցավ նաև այդ կազմակերպությունների կազմի մեջ: Ադրբեջանի մուսա-

վարական կառավարության վարած շովինիստական քաղաքականության հետևանքով Բաքվի նավթահանքերի բազմաթիվ հայ կադրային բանվորներ ստիպված եղան թողնել Բաքուն և վերադառնալ Հայաստան: Բաքվի բազմազգ պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի բովով անցած բանվորական այդ խավը համալրեց Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների շարքերը: Բանվորական ռևոլյուցիոն շարժման ազդեցության տակ աշխուժացան նաև գյուղացիական շարժումները:

1919 թ. գարնանը և ամռանը բանվորական ու գյուղացիական հուզումները ընդգրկեցին համարյա ամբողջ Հայաստանը: Դաշնակները իրենց հակաժողովրդական, իմպերիալիստական արտաքին և ռեակցիոն ներքին քաղաքականության հետևանքով աստիճանաբար կորցնում էին իրենց ոտքի տակի հողը: Երբեմնի դաշնակցության ազդեցության տակ գտնվող աշխատավորական հետամնաց տարրերը ևս գնալով հասկանում էին դաշնակցության ազգակործան քաղաքականության էությունը, հեռանում նրանից, կանգնում Կոմունիստական պարտիայի դրոշի ներքո: Կառավարական պարտիա դառնալը արագացրեց դաշնակցության կործանումը:

Երկրում ստեղծված քաղաքական իրադրությունը պահանջում էր միավորել Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների ջանքերը՝ Սովետական իշխանության համար մղվող պայքարում:

Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները մինչև 1919 թ. կեսերը մեկ ընդհանուր պարտիական ղեկավար կենտրոն չունեին: Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները միավորում և անմիջականորեն ղեկավարում էր ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեն: Վ. Ի. Լենինի կողմից գլխավորվող ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն, նրա Քաղբյուրոն և Կազմբյուրոն 1918—1920 թթ. բազմաթիվ անգամ ուղղորդել են Անդրկովկասում տիրող դրության հարցերին, ուղղություն տվել բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությանը: Կենտրոնից ցույց տրված ղեկավարության և օգնության շնորհիվ գնալով աշխուժանում էր Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը:

1919 թ. սեպտեմբերին ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ տեղի ունեցավ Հայաստանի Կոմունիստական կազմակերպությունների խորհրդակցություն, որի համար դեռևս ամռանը Երկրային Կոմիտեն իր անդամներ Ս. Կասյանին ու Ա. Մռավյանին գործուղել էր Հայաստան: Պարտիայի Երկրային Կոմիտեն որոշել էր սեպտեմբերին անցկացնել Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների կոնֆերանս: Սակայն, կոնֆերանսի անբավարար նախապատրաստվածության պատճառով նրան չէին մասնակցում մի շարք խոշոր կազմակերպությունների ներկայացուցիչները, որի պատճառով էլ կոնֆերանսը տեղի չունեցավ:

Խորհրդակցությունում լսվեցին Ս. Կասյանի, Ղ. Ղուկասյանի, Ա. Մռավյանի, Ա. Մելիքյանի զեկուցումները ընթացիկ մոմենտի և Հայաստանում 1917—1919 թթ. կատարված պարտիական աշխատանքների, պարտիական կազմակերպությունների վիճակի, երիտասարդության շրջանում տարվող աշխատանքների և այլ հարցերի մասին:

Խորհրդակցությունը որոշեց բոլշևիկյան կազմակերպությունների հիմնական խնդիրները տվյալ մոմենտում և միջոցառումներ նշեց կոմունիստական բջիջների ու խմբերի հետագա ամրապնդման ուղղությամբ:

Խորհրդակցությունն ընտրեց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները միավորող ղեկավար օրգան՝ ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտե (Արմենկոմ), որի կազմում մտան Ս. Ալավերդյանը, Ղ. Ղուկասյանը, Ս. Կասյանը, Ա. Մռավյանը և ուրիշներ:

Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմակերպական ձևավորման գործում վճռական էտապ հանդիսացավ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին կոնֆերանսը, որը անցկացվեց տեղի ունեցավ 1920 թ. հունվարի առաջին կեսում: Կոնֆերանսին մասնակցում էին պարտիայի 1200 անդամներ ներկայացնող 22 պատգամավորներ: Կոնֆերանսը քննարկեց ընթացիկ մոմենտի և պարտիայի քաղաքական գծի, պարտիայի կազմակերպական կառուցվածքի, գյուղացիության, զինվորների ու երիտասարդության շրջաններում տարվող աշխատանքների և այլ հարցեր:

Կոնֆերանսն ընտրեց ՌԿ(բ)Պ Արմենկոմի նոր կազմ, որի մեջ մտան Ս. Ալավերդյանը, Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Դ. Շահվերդյանը, Ղ. Ղուկասյանը, Դ. Տեր-Սիմոնյանը, Ա. Մելիքոնյանը և ուրիշներ: Կոնֆերանսը ողջույնի հեռագիր ուղարկեց Ադրբեջանի, Վրաստանի, Իրանի, Թուրքիայի կոմունիստական կազմակերպություններին:

Կոնֆերանսը խոշոր դեր խաղաց Հայաստանի Կոմունիստական պարտիայի կյանքում: Ավարտելով Հայաստանի կոմունիստական անջատ-անջատ կազմակերպությունների միավորումը մեկ ընդհանուր ղեկավար կենտրոնի՝ Արմենկոմի շուրջը, այն լուրջ նախադրյալներ ստեղծեց Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմակերպական ձևավորման ավարտման համար: Կոնֆերանսը որոշում ընդունեց, որ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունը, հանդիսանալով ՌԿ(բ)Պ-ի անբաժան մասը, օգտվելու է մարզային կազմակերպության իրավունքներից:

Կոնֆերանսից հետո զգալիորեն ամրապնդվեցին Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները: Ալեքսանդրապոլում, Քրդևանում (Դիլիջանի գավառ), Նոր-Բայազետում, Շամշադինում, Խաչիֆիլիսայում, Ղամարլվում, Կարսում և այլ վայրերում տեղի ունեցան կոնֆերանսներ ու խորհրդակցություններ, որտեղ միահամուռ կերպով պաշտպանվեցին Հունվարյան կոնֆերանսի որոշումները:

1920 թ. մայիսին Հայաստանի բանվորները ու գյուղացիները զինված ապստամբության միջոցով տապալեցին դաշնակների տիրապետությունը և երկրում հաստատեցին Սովետական իշխանություն: Ապստամբության կազմակերպիչն ու ղեկավարը Կոմունիստական պարտիան էր: Մայիսյան ապստամբությունը ցույց տվեց, որ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները մի ուժ են, որ իրենց հետևից են տանում երկրի բանվորներին, գյուղացիներին ու աշխատավոր մյուս խավերին և ընդունակ են մինչև վերջ հասցրնելու Սովետական իշխանության համար մղվող պայքարը:

1919 թ. երկրորդ կեսից, երբ Անդրկովկասում ստեղծված իրադրությունը (անգլիական զինված ինտերվենցիայի ծախողումը Անդրկովկասում, ռևոլյուցիոն շարժման աննախընթաց վերելքը, Կարմիր Բանակի զորամասերի մոտեցումը երկրամասի սահմաններին և այլն) ռեալ հնարավորություններ ստեղծեցին Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում սովետական կարգերի հաղթանակի համար և առաջ քաշվեց Անդրկովկասյան Սովետական անկախ ռեսպուբլիկաներ ստեղծելու լոզունգը, հարց դրվեց նաև այդ ռեսպուբլիկաներում

առանձին Կոմունիստական պարտիաներ ստեղծելու մասին: Այդ պրոցեսն ավարտվեց նրանով, որ 1920 թ. ամռանը Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները Վ. Ի. Լենինի և ՌԿ(բ)Պ Կենտկոմի ցուցումով ձևավորվեցին որպես Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիա, որը նույնպես, ինչպես և Ադրբեջանի ու Վրաստանի Կոմունիստական պարտիաները, անմիջականորեն ենթարկվում էր ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյին:

Մայիսյան ապստամբության ճնշումից հետո դաշնակները դաժան տեռոր սկսեցին Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների դեմ, սակայն չկարողացան ոչնչացնել նրանց: Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների գործունեությունը այդ շրջանում ղեկավարում էր Հայաստանի կոմունիստական կազմակերպության Արտասահմանյան Բյուրոն, որն սկզբում գործում էր Թիֆլիսում և այդ Բաքվում և անմիջապես ենթարկվում էր ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյին:

1920 թ. ամռանն ու աշնանը ՌԿ(բ)Պ Կենտկոմը և նրա Կովկասյան Բյուրոն մի շարք որոշումներ.նը ընդունում Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի, նրա Արտասահմանյան Բյուրոյի մասին: 1920 թ. հուլիս-օգոստոս ամիսներին տեղի ունեցած Կոմինտերնի 2-րդ կոնգրեսին մասնակցում են նաև Հայաստանի Կոմունիստական պարտիայի ներկայացուցիչները և հանդես գալիս զեկուցումով: Այդ զեկուցման մեջ նշվում է, որ 1920 թ. ամռանը Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների մեջ ընդունված մարդկանց թիվը հասել էր 3000 հոգու:

Հայաստանի Կոմունիստական պարտիան հանդես գալով որպես Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի անբաժան մասն ու նրա մարտական ջոկատներից մեկը, նախապատրաստում և ղեկավարում է Հայաստանի բանվորների ու գյուղացիների զինված ապստամբությունը դաշնակների բռնակալության դեմ, որն ավարտվում է պատմական խոշորագույն հաղթանակով՝ 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվում է Սովետական իշխանություն: Դա Մեծ Հոկտեմբերի հաղթանակն էր Հայաստանում: Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում շրջադարձային մոմենտ հանդիսացավ հայ ժողովրդի կյանքում: Պատմական այդ խոշորագույն հաղթանակը ձեռք բերվեց ռուս մեծ ժողովրդի, Սովետական Ռուսաստանի մյուս ժողովուրդների ու հերոսական Կարմիր Բանակի օգնությամբ, որոնք իրենց եղբայրական ձեռքը մեկնեցին հայ ժողովրդին՝ նրա իսկ խնդրանքով:

Վ. Ի. Լենինը ջերմորեն ողջունեց իմպերիալիզմի գաղութային հնչումից ազատագրված աշխատավորական Հայաստանին: Կոմունիստական պարտիան, Սովետական Ռուսաստանը, Սովետական Ադրբեջանն ու Ռուսաստանի եղբայրական մյուս ժողովուրդները եղբայրական անշահախնդիր օգնություն կազմակերպեցին հայ ժողովրդին՝ նրա դարավոր վերքերը բուժելու, Սովետական Սոցիալիստական Հայաստանը կառուցելու համար:

Անցած քառասուն տարիների ընթացքում հայ ժողովուրդը Սովետական Միության եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում, Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ պատմական խոշոր հաղթանակներ է ձեռք բերել սոցիալիզմի կառուցման ասպարեզում:

Դաշնակների տիրապետության օրոք Հայաստանը վեր էր ածվել ավերակների, ընչազուրկների, որբերի ու արցունքի երկրի: Օտարերկրյա իմպե-

ռիալիստները՝ մեր գերմանա-բուրժուական, մեր անգլո-ամերիկյան և ֆրանսիական, գաղութացրել էին Հայաստանը, այն վեր էին ածել Սովետական Ռուսաստանի դեմ պայքարի ռազմական պլացդարմի: Քաղցից ու համանարակից տարեկան մեռնում էին հարյուր հազարավոր մարդիկ: Երկրի արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը կանգնել էր կործանման եզրին: Դաշնակների տիրապետության ժամանակաշրջանում ոչ միայն չստեղծվեց որևէ արդյունաբերական ձեռնարկություն, այլև եղածներն էլ փաստորեն դադարեցին գործելուց: Փակվեց առանց այն էլ փոքրաթիվ դպրոցների և կուլտուր-կենցաղային հիմնարկների մեծ մասը: Հայաստանում—այդ հնագույն կուլտուրայի երկրում չկար և ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն: Աշխատավոր ժողովուրդը գտնվում էր խավարի և անգրագիտության գրկում:

Սովետական իշխանության տարիներին Հայաստանը, ցարիզմի այդ երբեմնի զաղութը, վեր է ածվել առաջավոր ծաղկող սոցիալիստական ռեսպուբլիկայի: Սովետական Հայաստանը իր ժողովրդական տնտեսության մի շարք ճյուղերի զարգացման մակարդակով (որոնք ստեղծվել են միայն վերջին 40 տարիներին) անցել է մի շարք կապիտալիստական երկրներից, էլ չենք խոսում հարևան Թուրքիայի և Իրանի մասին:

Սովետական իշխանության 40 տարիների ընթացքում բուռն կերպով զարգացել են հայկական ՍՍՌ-ի արտադրողական ուժերը:

Ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ զբաղված է 337 հազար մարդ: Նրանցից 60 հազարը բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մասնագետներ են: Մեր ռեսպուբլիկան այժմ յուրաքանչյուր 7 օրում արտադրում է շատ ավելի արտադրանք, քան արտադրվում էր ամբողջ 1913 թ. ընթացքում: 1960 թվականին ռեսպուբլիկայի արդյունաբերության համախառն արտադրանքը մոտավորապես 70 անգամ կգերազանցի 1913 թ. մակարդակը: Ռեսպուբլիկայի ինդուստրիալ հզորության մասին է վկայում այն փաստը, որ նրա արդյունաբերական ձեռնարկությունները մինչև 60 տեսակի արդյունաբերական արտադրանք են արտահանում ավելի քան 30 արտասահմանյան երկրներ:

Տարեցտարի նոր վերելք է ապրում ռեսպուբլիկայի գյուղատնտեսությունը: Կենսագործելով ՍՄԿՊ Կենտկոմի 1953 թ. Սեպտեմբերյան պլենումի և ՍՄԿՊ 20 և 21 համագումարների պատմական որոշումները, Հայաստանի գյուղատնտեսության նպատակի աշխատողները լուրջ հաջողությունների հասան: 1958 թվականին գյուղատնտեսական մբերումների հիմնական տեսակների գծով ռեսպուբլիկան գերակատարեց պետական մբերումների պլանը և արժանացավ կառավարական բարձր պարգևի՝ Լենինի շքանշանի:

Արդյունաբերության և գյուղատնտեսության հզոր աճը նոր թափ հաղորդեց նաև ռեսպուբլիկայի սննդի և թեթև արդյունաբերության համակողմանի զարգացմանը: Գնալով էլ ավելի է բարձրանում աշխատավորների կենսամակարդակը, բարելավվում նրանց կուլտուր-կենցաղային պայմանները: Բավական է նշել, որ միայն 1958 թվականին սոցիալ-կուլտուրական միջոցառումների ուղղությամբ ծախսվել է ավելի քան 1 միլիարդ ռուբլի:

Սովետական իշխանության խոշորագույն նվաճումներից է Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ մեր երկրում կատարված կուլտուրական

ռեոլյուցիան: Խոր և հոյակապ վերափոխումների շնորհիվ Սովետական Հայաստանը դարձել է սոցիալիստական բարձր կուլտուրայի երկիր:

Սովետական Հայաստանում տարեկան սովորում են 325 հազար մարդ: Բնակչության կուլտուրայի և գրագիտության մակարդակով մեր ռեսպուբլիկան վաղուց արդեն անցել է կապիտալիստական նույնիսկ առաջավոր երկրներից: Ռեսպուբլիկայում ստեղծված են 11 բարձրագույն ուսումնական հաստատություններ, 37 տեխնիկումներ և մասնագիտական միջնակարգ ուսումնական այլ հաստատություններ, որտեղ սովորողների թիվը կազմում է ավելի քան 29 հազար մարդ: Ավելի քան 65 գիտա-հետազոտական հիմնարկներում և ինստիտուտներում (այդ թվում ՀՍՍՌ ԳԱ ինստիտուտներում) աշխատում են մոտ 3 հազար գիտական աշխատողներ: 1950—1965 թթ. ընթացքում ստեղծվելու են 12 նոր գիտա-հետազոտական ինստիտուտներ ու լաբորատորիաներ:

Հայկական ՍՍՌ յուրաքանչյուր 10 հազար բնակչին 1958 թ. հասնում էր 22 բժիշկ, այն դեպքում, երբ ԱՄՆ-ում՝ 12, Ճապոնիայում՝ 10, Ֆրանսիայում՝ 10, Անգլիայում՝ 9, Թուրքիայում՝ 3, Իրանում՝ 1: Ռեսպուբլիկայի բոլոր գյուղերում գործում են կամ հիվանդանոցներ կամ ամբուլատորիաներ ու բժշկական կետեր: Բայեսզի պատկերացնել Սովետական Հայաստանի հսկայական բռիչքը այդ ուղղությամբ բավական է հիշել, որ 1913 թ. Հայաստանում հաշվվում էր ընդամենը 73 բժիշկ, իսկ 1917 թ.՝ շատ ավելի քիչ: 1913 թ. համեմատությամբ, հիվանդանոցային մահճակալների թիվը աճել է ավելի քան 51 անգամ, հիվանդանոցային հիմնարկներինը՝ 40 անգամ: Այժմ ռեսպուբլիկայում գործող 1383 դպրոցներում սովորող աշակերտների թիվը հասնում է 312 հազար հոգու, որը 19 անգամ շատ է, քան 1913 թվականին:

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—65 թթ. յոթնամյա պլանը նախատեսում է Սովետական Հայաստանի էկոնոմիայի բոլոր ճյուղերի նոր հզոր աճ: 1959—1965 թթ. կապիտալ ներդրումների ծավալը հասնում է մոտ 12,5 միլիարդ ռուբլու: Առավել արագ տեմպերով են զարգանալու գունավոր մետալուրգիան ու քիմիական արդյունաբերությունը, էներգետիկան, մեքենաշինությունը և արդյունաբերության այլ ճյուղեր: Հաստոցների արտադրությունը 1965 թ. կանի 7 անգամ: Նշանակալից չափով կավելանա թերև, սննդի և ժողովրդական տնտեսության այլ ճյուղերի համախառն արտադրանքը: Շնչտակի կերպով բարձրանալու է գյուղատնտեսական մթերքների արտադրությունը: Խոշոր փոփոխություններ տեղի կունենան կուլտուրայի, ժողովրդական կրթության, ժողովրդի կենսամակարդակի բարելավման ուղղությամբ: Սովետական Հայաստանը փայլուն օրինակ է այն բանի, թե ինչ կարող է տալ Սովետական իշխանությունը հնչված ու հարստահարված ժողովուրդներին: Հայ ժողովուրդը իր բոլոր նվաճումների ու երջանիկ կյանքի համար պարտական է մեծ Լենինին, Կոմունիստական պարտիային ու Սովետական իշխանությանը:

«Սովետական մարդիկ,— ասել է Ն. Ս. Խրուշչովը,— ամսեամիս և օրապուր ավելի ու ավելի լավ կապրեն: Նրանք կունենան ավելի շատ սննդամթերքներ, բնակարաններ, հագուստեղեն, մեր երկրում կլինեն ավելի շատ գործարաններ և հանքահորեր, մեր Հայրենիքի խորքերը ավելի ու ավելի կրափանցեն էլեկտրիֆիկացված երկաթուղիները: Մենք համարձակորեն և բերկրանքով

ընթանում ենք Կոմունիստական պարտիայի 21-րդ համագումարի որոշումներով նշված ուղիով, մեր յորնամյակի մեծ ուղիով»:

Հայ ժողովուրդը իր վերածնունդի պանծալի 40-ամյակը դիմավորում է էլ ավելի սերտորեն համախմբված Կոմունիստական պարտիայի և նրա լենինյան Կենտրոնական Կոմիտեի շուրջը, որը մեր երկրին առաջնորդում է դեպի մարդկության լուսաշող ապագան, դեպի կոմունիզմ: